Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն ՓԲԸ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ
Պետական Հիմնարկին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն Փակ Բաժնետիրական Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 22-ում, 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը վերաներկայացվել է Ընկերության ղեկավարության կողմից: Մեր կողմից աուդիտի են ենթարկվել նաև այդ վերաներկայացումը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ

ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

28 մարտի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. հունվարի 1-ի դրությամբ
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	7,301,923	7,419,267	3,138,333
Ոչ նյութական ակտիվներ	5	111,840	96,004	81,306
Ժամկետային ավանդներ	7	20,000		
		7,433,763	7,515,271	3,219,639
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ		9,100	8,811	9,127
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	12,179	10,982	14,650
Ժամկետային ավանդներ	7	102,098	118,437	111,723
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	85,921	39,630	33,777
		209,298	177,860	169,277
Ընդամենը ակտիվներ		7,643,061	7,693,131	3,388,916
Սեփական կապիտալ և պարտավորություններ	9			
Կանոնադրական կապիտալ		1,474,860	1,474,860	1,474,860
Պահուստային կապիտալ		74,081	74,081	74,081
Վերագնահատման պահուստ		4,269,009	4,269,009	693,842
Կուտակված շահույթ		412,836	454,800	501,604
		6,230,786	6,272,750	2,744,387
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ակտիվներին վերաբերվող շնորհներ		133,827	136,558	145,093
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	1,181,885	1,189,588	414,444
		1,315,712	1,326,146	559,537
Ընթացիկ պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	96,563	94,235	84,992
		96,563	94,235	84,992
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		7,643,061	7,693,131	3,388,916

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մարտի 28-ին

Գարեգին Խումարյան — Գործադիր տնօրեն

Սոֆյա Մալիյան — Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական գործունեությունից հասույթ	12	796,728	770,833
Գովազդից հասույթ		17,165	22,447
Վարձակալությունից եկամուտ		54,989	33,843
Դրամաշնորհներից եկամուտ		2,731	8,535
Այլ եկամուտներ		20,831	13,971
Հեռարձակման ծախսեր		(81,122)	(81,058)
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(674,772)	(651,466)
Մաշվածություն և ամորտիզացիա		(136,184)	(123,911)
Այլ ծախսեր	13	(62,134)	(59,830)
Գործառնական գործունեությունից վնաս		(61,768)	(66,636)
Ֆինանսական եկամուտ	14	12,140	10,221
Փոխարժեքային տարբերությունից վնաս		(39)	(38)
Վնաս մինչև հարկումը		(49,667)	(56,453)
Շահութահարկի գծով փոխհատուցում	15	7,703	9,649
Տարվա վնաս		(41,964)	(46,804)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հիմնական միջոցների վերագնահատում		-	4,359,960
Հետաձգված հարկի ազդեցություն		-	(784,793)
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		-	3,575,167
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(41,964)	3,528,363

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնա-դրական կապիտալ	Պահուստ ային կապիտալ	Վերագնահ ատման պահուստ	Կուտակ-ված շահույթ/ (վնաս)	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	1,474,860	74,081	693,842	501,604	2,744,387
Տարվա վնաս	-	-	-	(46,804)	(46,804)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	3,575,167	-	3,575,167
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	3,575,167	(46,804)	3,528,363
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,474,860	74,081	4,269,009	454,800	6,272,750
Տարվա վնաս	-	-	-	(41,964)	(41,964)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(41,964)	(41,964)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,474,860	74,081	4,269,009	412,836	6,230,786

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	(41,964)	(46,804)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	136,198	123,911
Հիմնական միջոցների օտարումից վնաս	350	200
Շահութահարկի գծով փոխհատուցում	(7,703)	(9,649)
Շնորհներից եկամուտ	(2,731)	(8,535)
Ֆինանսական եկամուտ	(12,140)	(10,221)
Անհուսալի և կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստավորման ծախսեր, զուտ	(241)	(600)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	(39)	(38)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	71,730	48,264
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(582)	4,269
Պաշարների փոփոխություն	(289)	316
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	2,334	9,278
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	73,193	62,127

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(35,040)	(59,782)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	-
Ստացված տոկոսային եկամուտ	12,105	10,507
Ներդրված/(հետ մարված) բանկային ավանդներ, զուտ	(4,000)	(7,000)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(26,935)	(56,275)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	46,258	5,852
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	33	2
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	39,630	33,777
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	85,921	39,631

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն» ՓԲԸ (Ընկերություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 20-ի թիվ 611 որոշմամբ:

Ընկերության ստեղծման նպատակը ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման գործունեության իրականացումն է՝ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Բաժնետոմսերի կառավարման լիազորությունը տրված է Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկին:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5:

2023թ.-ին Ընկերության հիմնական աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 254 մարդ (2022թ.՝ 246 մարդ):

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն

անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց, որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր և տնտեսվարող սուբյեկտների վրա: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ հողամասերի և շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2022թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2022թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոնշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2022թ.-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
ՖՀՄՍ 3	*Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 16	*Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 37	*Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	*2018-2021թ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշ նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ ապահովագրական պայմանագրերում՝ ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և կիրառություն 2)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՖՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.9 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ): Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հողերը և շենքերը, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճն ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	20-50 տարի
Տնտեսական գույք փոխադրամիջոցներ և այլ	2-8 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվները, որոնք ներառում են ձայնագրությունների ֆոնդը, ճանաչվում են այն դեպքում, երբ՝

- հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- ակտիվը վերահսկվում է Ընկերության կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և
- ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները) հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստը: Հետագա ծախսումները կապիտալացվում են ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքի վրա, եթե ակնկալվում է, որ դրանց վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն:

Ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում մի շարք գործոններ, մասնավորապես ակտիվի նկատմամբ վերահսկողության ժամանակաշրջանը և ակտիվի օգտագործման նկատմամբ իրավական և նմանատիպ սահմանափակումները: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի:

3.4 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

3.5 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումը և հետագա չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները: Հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում և ֆինանսական եկամուտում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 16.2-ում:

Ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը և հետագա չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, որոնք ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 16.2-ում:

3.6 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը: Վերագնահատման պահուստը ներառում է հողի և շենքերի վերագնահատումից աճը: Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.7 Պետական շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ընկերության կանոնադրական նպատակների համար ստացված շնորհը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն տարում, երբ դրանք ստացվել են:

3.8 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները

3.9 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Գովազդից հասույթ

Առաջանում է գովազդային ժամանակի վաճառքից և ճանաչվում է կնքված պայմանագրերի համաձայն, ծառայության փաստացի մատուցման ժամանակ:

Դրամաշնորհներից եկամուտ

Դրամաշնորհներից եկամտի ճանաչման քաղաքականությունները ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հոդվածի մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող	Շենքեր	Կառուցված-քներ	Տնտեսական գույք, փոխադրամիջոցներ և այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	1,613,128	1,842,682	16,123	673,983	4,145,916
Ավելացում	-	25,709	-	12,645	38,354
Օտարում	-	-	-	(224)	(224)
Վերագնահատումից արժեքի աճ	882,377	3,477,583	-	-	4,359,960
Վերագնահատման հետևաքով դուրսգրում	-	(576,929)	-	-	(576,929)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,495,505	4,769,045	16,123	686,404	7,967,077
Ավելացում	-	2,077	-	8,575	10,652
Օտարում	-	-	-	(70)	(70)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,495,505	4,771,122	16,123	694,909	7,977,659
Կուտակված մաշվածություն					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	-	497,668	8,974	500,941	1,007,583
Տարվա հաշվարկ	-	79,261	807	37,112	117,180
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-		(24)	(24)
Վերագնահատման հետևանքով դուրսգրում	-	(576,929)	-		(576,929)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	9,781	538,029	547,810
Տարեկան մաշվածություն	-	95,411	806	31,729	127,946
Կուտակված մաշվածության դուրսգրում	-		-	(20)	(20)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	95,411	10,587	569,738	675,736
Հաշվեկշռային արժեք					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,495,505	4,769,045	6,342	148,375	7,419,267
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,495,505	4,675,711	5,536	125,171	7,301,923

Ընկերության հիմնական միջոցները գրավադրված չեն:

Ընկերության հողերը և շենքերը վերջին անգամ վերագնահատվել են անկախ գնահատողի կողմից 2023թ. հունվարի 1-ի դրությամբ՝ օգտագործելով համեմատական և շուկայական արժեքի մեթոդները:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 401,042 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 368,932 հազար դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համա-կարգչային ծրագրեր	Ձայնա-գրություն-ների ֆոնդ և այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	6,503	102,737	109,240
Ավելացում	-	21,429	21,429
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,503	124,166	130,669
Ավելացում	-	24,388	24,388
Օտարում	-	(300)	(300)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,503	148,254	154,757
Կուտակված ամորտիզացիա			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	5,223	22,711	27,934
Տարվա հաշվարկ	200	6,531	6,731
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,423	29,242	34,665
Տարվա հաշվարկ	200	8,052	8,252
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,623	37,294	42,917
Հաշվեկշռային արժեք			
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,080	94,924	96,004
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	880	110,960	111,840

2023թ.-ին և 2022թ.-ին ոչ նյութական ակտիվների ավելացումները հիմնականում ձայնադարանի և ձայնագրությունների ֆոնդի ստեղծմանն ու զարգացմանն ուղղված կապիտալացված ծախսումներն են:

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	8,462	8,796
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	1,521	1,514
Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	2,196	1,287
Պարտքային կորուստների համար պահուստ	-	(615)
	12,179	10,982

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերության՝ համեմատական ժամանակաշրջանի առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

7 Ժամկետային ավանդներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մայր գումար	120,000	116,000
Հաշվեգրված տոկոս	2,472	2,437
Ակնկալվող պարտքային կորուստ	(374)	-
	122,098	118,437

8 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	579	503
Բանկային հաշիվներ	85,342	39,127
	85,921	39,630

Բոլոր մնացորդներն արտահայտված են հայկական դրամով:

9 Կապիտալ և պահուստներ

9.1 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,474,860 հազար դրամ: Այն բաժանված է 3,941,473 հատ հասարակ բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 374.19 դրամ անվանական արժեքով:

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Ընկերության միակ բաժնետերը: Ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունը տրված է Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկին:

9.2 Պահուստային կապիտալ

Ընկերության կուտակված շահույթից ընդհանուր պահուստ հատկացումներ են կատարվում: Հատկացումը կարգավորվում է Ընկերության կանոնադրությամբ, համաձայն որի պահուստի չափը պետք է լինի կանոնադրական կապիտալի 15 տոկոսից ոչ պակաս:

9.3 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է հողերի և շենքերի վերագնահատման արդյունքում: Վերագնահատված հողերի և շենքերի օտարման կամ իրացման ժամանակ դրանց գծով վերագնահատման պահուստը հաշվեգրվում է ուղղակիորեն կուտակված շահույթին:

10 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	1,189,588	414,444
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում	(7,703)	(9,649)
Դեբետագրված այլ համապարփակ ֆինանսական արդյունքին	-	784,793
Տարեվերջի մնացորդ	1,181,885	1,189,588

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվար 2023թ.	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբեր 2023թ.
Հետաձգված հարկային ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	111	-	-	111
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,854	-	(330)	9,524
Շնորհներ	15,374	-	(32)	15,342
Կուտակված հարկային վնաս	17,031	-	(4,829)	12,202
	42,370	-	(5,191)	37,179
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	1,231,752	-	(12,819)	1,218,933
Ոչ նյութական ակտիվներ	206	-	(75)	131
	1,231,958	-	(12,894)	1,219,064
Զուտ արդյունք – հետաձգված հարկային պարտավորություններ	(1,189,588)	-	7,703	(1,181,885)

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվար 2022թ.	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբեր 2022թ.
Հետաձգված հարկային ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	219	-	(108)	111
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,343	-	511	9,854
Շնորհներ	14,341	-	1,033	15,374
Կուտակված հարկային վնաս	11,823	-	5,208	17,031
	35,726	-	6,644	42,370
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	449,916	784,793	(2,957)	1,231,752
Ոչ նյութական ակտիվներ	254	-	(48)	206
	450,170	784,793	(3,005)	1,231,958
Զուտ արդյունք – հետաձգված հարկային պարտավորություններ	(414,444)	(784,793)	9,649	(1,189,588)

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	12,597	13,535
Հաճախորդներից կանխավճարներ	218	5,954
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	30,838	25,903
Փոխհատուցումներ աշխատակիցներին	52,910	48,843
	96,563	94,235

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

12 Հիմնական գործունեությունից հասույթ

Հասույթն առաջանում է 2023թ.-ի դեկտեմբերի 29-ին «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի հետ Ընկերության կողմից կնքված պայմանագրի իրականացումից, որը վերաբերում է պետության կարիքների համար ռադիոարտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման հետ:

13 Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գրասենյակային և հաղորդակցության ծառայություններ	19,590	19,661
Լրատվության և արտաքին տեղեկատվության ձեռքբերում	12,351	10,938
Շուկայավարման և գովազդի ծախսեր	1,656	1,504
Նյութերի ծախսագրում	4,015	7,580
Ներկայացուցչական ծախսեր	3,896	2,133
Տրանսպորտային ծախսեր	3,234	1,189
Այլ ծախսեր	17,392	16,825
	62,134	59,830

14 Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	11,179	9,681
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	961	540
	12,140	10,221

15 Շահութահարկի գծով փոխհատուցում

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա-վետ հարկային դրույքա-չափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա-վետ հարկային դրույքա-չափ (%)
Վնաս մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(49,667)		(56,453)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	(8,940)	18.00	(10,162)	18.00
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, զուտ	1,237	(2.49)	513	(0.91)
Շահութահարկի գծով փոխհատուցում	(7,703)	15.51	(9,649)	17.09

16 Ֆինանսական գործիքներ

16.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

16.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8,462	9,468
Ժամկետային ավանդներ	122,098	118,437
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	85,921	39,630
	216,481	167,535

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	65,507	62,378
	65,507	62,378

17 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը և բանկերում մնացորդները, ներառյալ ժամկետային ավանդները: Ընկերությունը

կարգավորում է այս ռիսկը դրամական միջոցները հեղինակավոր բանկերում պահելու միջոցով: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հավաքագրման հետ կապված ռիսկերը շատ փոքր են: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8,462	9,468
Ժամկետային ավանդներ	122,098	118,437
Մնացորդներ բանկերում	85,342	39,127
	215,902	167,032

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2023թ.	Անտոկոս	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		
Մինչև 6 ամիս	12,597	12,597
6 ամսից մինչև 1 տարի	52,910	52,910
	65,507	65,507

2022թ.	Անտոկոս	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		
Մինչև 6 ամիս	13,535	13,535
6 ամսից մինչև 1 տարի	48,843	48,843
	62,378	62,378

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը և ստացվելիք դրամաշնորհները: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը բավարար են անհրաժեշտ դրամական արտահոսքերը կատարելու համար: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1 ամսվա ընթացքում:

18 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

18.1 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ընկերության հողերը և շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հողերի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Այս ակտիվների իրական արժեքները գնահատվում են՝ հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր: Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում:

Իրական արժեքը որոշվել օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից նմանատիպ պայմաններով անշարժ գույքի համար հայտարարված վաճառքի գների հիման վրա, կիրառելով 0.6-ից 1.2 տիրույթում ընկած գործակիցներ՝ օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից տարբերությունների (առկայության դեպքում) հետ կապված ելակետային գները ճշգրտելու համար: Հողերի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, քանի որ կիրառվող գնահատման տեխնիկայի դիտարկելի ելակետային տվյալների գծով կատարվել են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ (գործակիցներ):.

19 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ):

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները ստուգվող հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Զուտ պարտք		
Ընդհանուր սեփական կապիտալ	6,230,786	6,525,816
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(208,019)	(158,067)
	6,022,767	6,367,749
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	6,230,786	6,525,816
Ընդհանուր ֆինանսավորում	6,230,786	6,525,816
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	0.97	0.98

20 Պայմանականություններ

20.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

21 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են ստորև նշված ընկերությունները, որոնք Ընկերության հետ միասին գտնվում են Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկի կառավարման ներքո.

- Հայաստանի հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ,
- Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ:

Ընկերությունն իր մատուցված ծառայությունների դիմաց գումարները ստանում է Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկից:

21.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

- Ընկերության կողմից Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ ՊՀ-ին մատուցած ծառայությունների արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմել է 796,728 հազար դրամ (2022թ՝ 784,109 հազար դրամ):
- Ընկերության կողմից Հայաստանի հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ-ին մատուցած ծառայությունների արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմել է 3,200 հազար դրամ (2022թ՝ 0):

21.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	34,670	34,869
	34,670	34,869

22 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

2023թ.-ին Ընկերությունը վերաներկայացրել է 2021թ. և 2022թ. ֆինանսական հաշվետվությունները: Վերաներկայացման համար հիմք է հանդիսացել հողի հարկային բազայի նվազումը: Արդյունքում՝ հետաձգված հարկային պարտավորություններն աճել են 253,066 հազար դրամ, իսկ վերագնահատման պահուստը նվազել է նույն գումարով: